

Աստուծո՞ւն իւր ծայրագոյն մեծ վայելչութեան մէջ՝ իբրև մարդկային ազգի հայր մարդոց՝ Աստուծոյ զաւակներ ու իրար մէջ՝ միմեանց եղբայրներ. յաւիտենական կեանքն՝ բարի և չար գործոց հատուցումն անող. իսկ իրան՝ Աստուածանից զբրկուած՝ մարդկային ազգի եղբայր. որ մոլորուած, մեղքի մէջ ընկած, ստորացած ու թշուառացած մարդուն բարձրացնի. էլ ի տանի իւր արժանաւորութեանն, ու մարդոց սիրտն առ Աստուած դարձնի: Այս էր հասարակ «էրը, յայն», որ Նա մահկանացու մարդկային ազգին տուեց. այս է միական, անփոփոխն, յաւիտենականն ու ճշմարիտն, որ իբրև ամենախորին նախագացումն՝ հիմն է ամեն՝ մինչև անգամ այլանդակ կրօնների: Սորա համար էլ աշխարհիս Փրկչի յայտնած հաւատն «կրօնագոյն», իսկական և բռնկրօն է, մարդկային ազգի հոգւոյ մէջ Աստուածանից դրած սրբութիւնն:

Թարգմ. Գ. Ե Ա.

Ռուսաց ЦЕРКОВИ. ВѢСТ. շաբաթաթերթի իւր 42 համարում հրատարակած է յօդուած «ինչպէս անցնում են տօն և կիրակի օրերն ընդհանրապէս Ռուսաստանում և մասնաւորապէս Մոսկվայում»: Այս յօդուածի մէջ դուրս է բերած, որ շահախնդրութիւնն և դրամական վաստակի սէրը բոլորովին հեռացրել է Ռուս ուղղափառ ժողովուրդը եկեղեցու պահանջից, որ հրամայում է սուրբ պահել կիրակի և տօն օրերը, սրանց Աստուծոյ պաշտաման նուիրելով, մինչդեռ ներկայումս ամենուրեք հակառակն է տեսնուում: Այս խնդրի մասին Մոսկվայի քաղաքային վարչութիւնը ներկայ տարուան մայիսին վճիռ կայացրեց, որ կիրակի և տօն օրերին առւտրական հաստատութիւնք և գործարանները դադարեցնեն իրանց գործունէութիւնն և միջոց տան այսպէս իրանց մէջ աշխատողներին, տօն օրերը նուիրել Աստուծոյ և իրանց բարոյական—կրօնական բաւականութեան: Բայց փոքրաթիւ շահասէրների դիմադրու-

Թիւնը չորս ամսից յետ անցեալ Հոկտեմբերի Աին կարող եղաւ Մոսկվայի քաղաքային վարչութեան փոխել տալու իր մայիսի վճիռը, հիւճ բռնելով, որ կիրակի և տօն օրերը տօնավաճառների օրեր են սովորաբար և այդ օրերը մեծ առուտուր է լինում, թէ Մոսկվայում և թէ բոլոր Ռուսաստանում. ուստի և տօն օրերին վաճառականութիւն արգելելը նշանաւոր նիւթական վնաս կպատճառէ թէ Մոսկվային և թէ ընդհանրապէս Ռուսաստանին: Տօների և կիրակիների սրբապահութեան հակառակորդները թէ քաղաքային վարչութեան մէջ և թէ հրապարակաւ լրագիրներում չքաշվեցան յայտնել, որ իրանք նախագաս են համարում ծառայել աւելի մամոնային քան Աստուծոյ: Չնայելով, որ Մոսկվայի քաղաքային խորհրդարանում վիճարանութեանց ներկայ ելող բազմութիւն հանդիսականք դրութէ միաձայն համակրութիւն յայտնեցին կիրակի օրերի սրբութիւնը պաշտպանողներին. բայց և այնպէս քաղաքային վարչութիւնը իւր դռնիակ նիստում Աին դեկտեմբերի ձայների ստուար մեծամասնութեամբ ջնջեց մայիսի որոշումը և նոր վճիռ կայացրեց, որով չէ արգելվում ոչ առւտուրը կիրակի և տօն օրերին և ոչ էլ գործունէութիւնն առւտրական հաստատութիւններում ու գործարաններում, որոնց տէրերն իրանց շահի համար չեն ինսյսււմ իրանց ծառայողների թէ ֆիզիքական և թէ բարոյական շահերը: Բայց այդ հետեանք է սխտը հասկացողութեան և տգիտութեան: Արեւմտեան Եւրոպայի համար վիճակագրական տեղեկութեանց հիման վերայ վճռած խնդիր է, որ վեց օր գործող և եօթներորդ օրը հանգիստ վայելող և այդ օրը Աստուծոյ պաշտաման և իր բարոյական ու կրօնական զբաղմանց նուիրող աշխատաւորն աւելի է վաստակում, քան շաբաթուան մէջ եօթն օրերն էլ անդադար բանողը, որովհետև շաբաթուան մէջ եօթներորդ օրը հանգստացողը ֆիզիքապէս և բարոյապէս կազդուրուում է, նորա թուլացած ուժերն ամրանում են նոր աշխուժով աշխատելու համար, մինչդեռ դորա հակառակ կիրակի օրը հանգիստ չվայելող մշակն անընդհատ աշխատանքից ֆիզիքապէս թուլանում է և ութերորդ ու հետեեալ օրերն անկարող է տանել այն աշխատանքին, որ ամենայն հեշտութեամբ տանում է կիրակին սուրբ պահող մշակը: Վիճակագրական հաշիւները

ցայց են տուած, որ այն երկիրներն ու քաղաքներն, որոնց բնակիչները սուրբ են պահում կիրակին՝ աւելի հարուստ են և նոցա արտադրութիւնք համեմատաբար աւելի են: Եւրոպայի առւտրական մեծ կենդրոնները՝ Լոնդոն, Փարիզ, Բերլին Վիեննա, Համբուրգ և այլն, աւելի հարուստ են և նոցա բնակիչներն աւելի բարօրութիւն են վայելում քան Մոսկովան և Ռուսաստանի այլ վաճառաշահ քաղաքները: Միթէ նոքա վնաս են կրում, որ ամենայն սրբութեամբ պահում են կիրակին և այն օրը նուիրում միայն Աստուծոյ պաշտաման և բարոյական — կրօնակոն զբաղմանց: Այդ օրը պանդոսները, դինետներն և զուարճութեանց տեղիքը փակ են վերոյիշեալ երկիրներում: Բայց սոքտ համեմատաբար աւելի հարուստ են և այնտեղ աշխատաւորն վեց օր բանելով աւելի է վաստակում: Այդ երկիրներում քաղաքական օրէնքներն էլ խստիւ պահանջում են կիրակիի սրբապահութիւնը: Իսկ ընդհակառակն Ռուսաստանում փոքրաթիւ շահամուլ և մամոնային քան Աստուծոյ ծառայելու պատրաստ, բայց իրանց դիրքով և հարստութեան ուժով ազդեցիկ եսասէր անձանց ազդեցութեամբ ընդհանուր ախտ է դարձած կիրակի և տօն օրերի սուրբ պահելու օգուտը չհասկանալը, որոյ հետեանքն է, որ այդ օրերը Աստուծոյ տաճարները թափուր են լինում աղօթողներից, մինչդեռ գործարանները, խանութներն և զուարճութեանց տեղերը լիքն են լինում յաճախորդներով, որով և ժողովրդի բարոյականութիւնն օրից օր աւելի և աւելի նուազում է: Նոյն ախտով վարակուած են և Ռուսաստանի հայ հասարակութիւնք և այս էր պատճառն, որ Նորին Օծութեան՝ Վեհափառ Հայրապետի Թիֆլիզ եղած ժամանակ, հայ գործակատարներն, որոնք անձամբ զգացել են կիրակին սուրբ պահելու կարևորութիւնն, սրպէս զի կարող լինին այդ օրը Աստուծոյ պաշտաման և բարոյական զբաղմանց նուիրելով զիղիքապէս և հոգեպէս կազդուրվել, Նորին Վեհափառութեան խնդրամատոյց եղել էին խնդրելով այդ մասին Նորա կարգադրութիւնն և օգնութիւնը: Նորին Օծութիւնն ընդունելով գործակատարների արգար և իրաւացի խնդիրն, պատուէր տուեց քահանայից շարունակ քարոզել և յորդորել ժողովուրդը կիրակի և տօն օրերը սուրբ պահելու: Հայերը գործնական ժողովուրդ են, իսկ այսպիսի մի

ազգի համար փորձերի հետեանքն, աւելի համողիչ փաստ է. աւուտի և մեր Հայ վաճառականներն և գործարանատէրերը պէտք է աւելի ուշք դարձնեն եւրոպայի աւելի մեծ առեւտրական կենդրոնների վերայ և նոցա օրինակին հետեւեն: Միւս կողմից հայ ազգը կրօնական ազգ է, նորա բոլոր գոյութիւնը եկեղեցիով է, որոյ կանոնները պահանջում են սուրբ պահել կիրակին և տօն օրերը: Եկեղեցու այս պահանջից շեղվելով Հայը շեղվում է իւր գոյութեան ճանապարհից—ուրեմն դէպի իւր վնասն է գնում: Ցարակոյս չկայ, որ Հայ վաճառականը կիրակի օրը իւր խանութը փակելով և իրան ու իւր գործակատարներին միջոց տալով բարոյական և կրօնական զբաղմունքներով կազդուրելու իրանց սիրտն ու հոգին, աւելի վաստակած կլինէին, քան այն մի քանի կոպէկներն, որոնք նոքա կիրակի օրուան առուտուրով ձեռք պիտի բերեն ի վնաս թէ իրանց և թէ իրանց գործակատարների բարոյական և կրօնական զգացմանց: Երկիւղած և բարեկիրթ գործակատարն աւելի հաւատարիմ կլինի և աւելի օգուտ կտայ իւր տիրոջ վեց օրում. քան անհաւատարիմը բանելով շաբաթուան և եօթներորդ օրը: Յայտնի բան է այդ վնասակար դիրքը հետեանք է ներկային նիւթապաշտութեան, որ ստիպում է մարդուս մոռանալ իւր գլխաւոր հոգեւոր մասը, միայն մարմնոյն հոգացողութեամբ նորան զբաղեցնելով: Պէտք է յիշենք միշտ սուրբ Գրքի խօսքերը թէ «ոչ հացիւ միայն կեցցէ մարդ»:

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՎԵՐԱԾՆԴԻՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Շարահանդեսներ)

1796 թուին պարսկական պատերազմից յառաջ գլխաւոր հրամանատար կոմս Զուբովի անուանով գրուած հրովարտակում (рескриптъ) ասուած է, թէ Ռուսաստանը զէնք է բարձրա-